

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 27/2

**13 մայիսի 2014 թ.**

Քննարկվեց քաղաքացի Տիգրան Ղազարյանի 14.04.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ պետի 13.03.2014 թ-ի թիվ 0235 որոշման դեմ:

**Քաղաքացի Տիգրան Ղազարյանի գանգատում բերված փաստարկները.**

03.04.2014 թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու տարածքային հարկային տեսչությունից ստացվել է գրություն, որից պարզվում է, որ իր նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ, որի հիման վրա կայացվել է հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին թիվ-0235 որոշումը: Վերջինիս համաձայն, որոշվել է գանձել 424668 դրամ:

Ինչպես տեսնում ենք թիվ-0235 որոշումից չի հասկացվում, թե ինչ հարկային պարտավորությունների մասին է խոսք գնում:

Ըստ գանգատի, քանի որ վարչական վարույթի հարուցման մասին չի ծանուցվել, ակտ չի տրամադրվել, ուստի Տիգրան Ղազարյանը դիմել է Գյումրու ՏՀՏ՝ խնդրելով տրամադրել հարուցված վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտը: Ակտի փոխարեն տրամադրվել է մի հաշվարկ, համաձայն որի 2012 թ-ին իրականացվել է հետևյալ գործարքները՝

	Ավտոմեքենայի մակնիշը	Պետ համարանիշը	Ձեռք բերման տարեթիվը	Իրացման տարեթիվը	Իրացման գումարը /դրամ/
1	ՎԱՁ 2107	23ՍՍ451	22.11.2010	20.03.2012	700000
2	ՄՈՄԿՎԻՉ 2140	45 ՍՕ 241	26.07.2003	07.04.2012	150000
3	Mercedes C 240	30 ԼՕ 115	26.11.2011	11.07.2012	1000000
4	Mercedes C 230	29 ՍՍ 783	03.10.2011	10.10.2012	1000000

Ըստ գանգատի, Տիգրան Ղազարյանը երբևիցե ձեռք չի բերել ՎԱՁ 2107 մակնիշի ավտոմեքենա և բնականաբար նշված մեքենայի իրացման մասին խոսք գնալ չի կարող:

Գյումրու ՏՀՏ որոշումն անօրինական է, քանի որ «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքից բխում է, որ հարկի վճարման պարտավորություն առաջանում է այն դեպքերում, երբ վաճառվում է միատեսակ առնվազն երկու այնպիսի գույք, որոնք երկուսն էլ ձեռք են բերվել վաճառքին նախորդող մեկ տարվա ընթացքում:

Տվյալ դեպքում վաճառված երեք ավտոմեքենաներից միայն մեկն է ձեռք բերվել վաճառքին նախորդող մեկ տարվա ընթացքում:

Հարկային տեսչության կողմից «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ պարբերությանը հղում անելը ճիշտ չէ, քանի որ 11.07.2012 թ-ին իրականացված գործարքը չի կարող համարվել ապրանքի մատակարարում, ուստի չի կարող առաջացնել հարկային պարտավորություն և ԱԱՀ-ի հաշվարկ ներկայացնելու անհրաժեշտություն:

Ելնելով վերոգրյալից Տիգրան Ղազարյանը խնդրում է անվավեր ճանաչել ՊԵԿ Գյումրու ՏՀՏ թիվ 0235 որոշումը, քանի որ այն ընդունվել է օրենքի խախտմամբ, օրենքի սխալ մեկնաբանման հետևանքով:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ճանապարհային ոստիկանությունից ստացված տեղեկությունների համաձայն քաղաքացի Տիգրան Ղազարյանը բնակվող ք.Գյումրի, Գործարանային նրբ. 67ա, բն. 23 հասցեում իրականացրել է հետևյալ գործարքները.

1. 07.04.2012 թ-ին վաճառել է «Մոսկվիչ 2140» մակնիշի 45 ՍՕ 241 պետհամարանիշի ավտոմեքենան, որը ձեռք է բերել 26.07.2003 թ-ին.

2. 11.07.2012 թ-ին վաճառել է <Mercedes Benz C-240> մակնիշի 30 LO 115 պետհամարանիշի ավտոմեքենան, որը ձեռք է բերել 26.11.2011 թ-ին.

3. 10.10.2012 թ-ին վաճառել է <Mercedes Benz C-230> մակնիշի 29 SU 783 պետհամարանիշի ավտոմեքենան, որը ձեռք է բերել 03.10.2011 թ-ին:

Քննարկվող դեպքում Տիգրան Ղազարյան կողմից վաճառված ավտոմեքենաներից «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն ապրանքի մատակարարում է համարվում 11.07.2012 թ-ին <Mercedes Benz C-240> մակնիշի 30 LO 115 պետհամարանիշի ավտոմեքենայի վաճառքը, որի գծով Տիգրան Ղազարյանը պետք է ներկայացներ ֆիզիկական անձի իրականացրած գործարքների մասով ԱԱՀ-ի հաշվարկ, որում պետք է արտացոլեր տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրում նշված վաճառքի արժեքի (1.000.000 դրամ) նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ն՝ 16.67% դրույքաչափով, որը կազմում է 166.700 դրամ:

Այսպիսով, հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածների դրույթները 24.02.2014 թ-ի դրությամբ Տիգրան Ղազարյանի հարկային պարտավորությունը կազմում է ընդամենը 424.668 դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ և 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ պետի կողմից 13.03.2014 թ-ին ընդունվել է թիվ 0235 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Տիգրան Ղազարյանից 424.668 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն. «Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում՝

...

բ. մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում»:

Քննարկվող դեպքում քաղաքացի Տիգրան Ղազարյանի կողմից իրականացվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված ապրանքի մատակարարման գործարք, քանի որ 2012 թ-ին 2-րդ անգամ

օտարվել է նույն տեսակի գույք՝ ավտոմեքենա, իսկ 2-րդ գույքի օտարումը (<Mercedes Benz C-240> մակնիշի 30 LO 115 պետհամարանիշի ավտոմեքենա) կատարվել է այդ ավտոմեքենայի ձեռքբերմանը հաջորդող 1 տարին չգերազանցող ժամանակահատվածում: Հետևապես, իրականացված գործարքի մասով Տիգրան Ղազարյանի կողմից պետք է ներկայացվեր ԱԱՀ հաշվարկ և հայտարարեր ԱԱՀ-ի գծով առաջացած պարտավորությունը:

Սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և դրան առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ներկայացվել են քննարկման Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ պետի 13.03.2014 թ-ի թիվ 0235 որոշումը թողնել անփոփոխ:  
Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ